

6434

087-1

f-56

2010

800009831 400002 211840 00000000

W.Y.-07 20-77

Pug 9 Sw 25-5-7

flaccida
rigidiflaccida

ՔԻՆԱՅԻ ԳԻՒՏԸ

2 P 0 3 3

ԵՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ՕՐ. ՄԱՐ. ԱԿԻՄԵԱՆԻ.

ՏՈՍԿԱՆԻԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ. Օ. ՀԵՐԲԵԿԻ

889.

0871:547.94

R-56

Հ ԲԻՆԱՅԻ ԳԻՒՏԸ

III

Զ Ր Ո Յ Յ



ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ՕՐ. ՄԱՐ. ԱԿԻՄԵԱՆԻ.

— — —

ՄՈՍԿՈՒ

ՀՈՒՆԴՐԱՆ ԵՒ ՏՊԱՐԱՆ Օ. Օ. ՀԵՐԲԵԿ.

1889.

9328-ԱԴ

Дозволено цензурою. С.-Петербургъ, 1 Мая 1889 года.



5098-50

9-



ՔԻՆԱՅԻ ԳԻՒՏԸԼ.

Տասնեւիսիթերորդ դարու կիմին Պերուայի Հնդիկներն անհաշա թշնամութիւն էին տածում գէպի Սպանացիք, որոնք նուածել էին նոցա Ճոխ Հայրենիքը: — Ամենաճիշտ աւանդութիւններն, որոնք անցնում էին ազգից ազգ, պահպանեցին այդ Ճնշեալ և գժբաղդ ժողովորդի մէջ սարսափելի յիշողութիւններ նոցա Հարստահարիչների անգիտութեան մասին: Նոքա բոլորովին ստրկացած էին և հնազանդում Սպանացոց միմիայն ահից ու երկիւղից ստիպուած: Այդ ժամանակներում մի փոխարքայ, որ գերազանցում էր խստութեամբ իւր բոլոր նա-

Խորդներին, հասցրեց նոցա անզօր թշնամութիւնն և ատելութիւնը մինչև վերին աստիճանի: Նորա ատենագլիրը, որ խստութեամբ կատարում էր նորա հրամանները, ազահ էր և չափից գուրս անգութ: Հնդիկներն ատում էին նորան աւելի քան փոխարքային: Այդ ատենագլիրը յանկարծ մեռաւ: Մահուան սարսափելի տանջանքները, որ ուղեկցում էին նորա կեանքի վերջին բոպէնները, ստիպեցին ամենքին կարծելու՝ թէ Հնդիկները թունաւորել են նորան: Սպանացիք ամեն միջոց գործ գրին յանցաւորներին գտնելու, բայց ոչինչ չկարողացան պարզել: Այս դէպքից յետոյ նոքա համոզուեցան, որ Հնդիկներին ծանօթ է ամենասասափիկ թղյնն և նոքա գործ են ածում այդ՝ հարկաւոր դէպքում: Մինչ այս՝ փոխարքան կոչուեցաւ Սպանիա, իսկ նորա տեղը նշանակել էին կոմս Ցինշնին: Երիտասարդ կոմսը, որ շատ գեղեցիկ էր և որին բնութիւնը պարզել էր ամեն տեսակ աղնիւ յատկութիւններ, նոր էր պսակուել: Նորա ամուսինն անպատճառ ուզում էր զնալ նորա հետ Պերու, բայց կոմսը՝ վա-

խենալով ենթարկել նորան կեանքի ծանր պայմաններին և Հնդիկների նենգութեանը, կամենում էր թողնել նորան Սպանիայում, թէ անտանելի ծանր էր թվում իրան՝ սիրելի կողջեց բաժանուելը: Կոմսուհին իւր կողմից յուսահատութեան մէջ էր այն մաքից՝ թէ իւր ամուսինը, որին չերմեւ անկողծ սիրում էր, ենթարկուած կը լինի մի վայրենի և անզուսպ ժողովրդի ատելութեան և վրիմին: Նոր անցքերն և զանազան հնարած զրոյցները ստիպում էին նայել Հնդիկների վերայ ինչպէս մի ժողովրդի, որ ընդունակ է անարդ գաւաճանութիւններ և նենգաւաւոր յանցանկներ գործելու: Սակայն՝ չնայելով այդ բոլոր սարսափելի պատմութիւններին, կոմսուհին հաստատ վճռեց զնալ իւր ամուսնու հետ և նորա հետ բաժանել կեանքի բոլոր դժուարութիւններն և վտանգներն՝ ինչպէս վայել է մի քննոյշ և սիրող կոնջ: Նա կամեցաւ առնել իւր հետ մի քանի Սպանացի տիկիններ, որոնց հետ կարողանար ուրախ կերպով ժամանակ անցուցանել Լիմայում: Նոցա թւումն էր և թէատրիչէն՝ կոմսուհու պատանեկութեան

ամենամտերիմ ընկերուհին։ Բէասրիչէն միքանի տարով մեծ էր կոմուհուց, բայց նանորան այնպէս ջերմ ու անկեղծ էր սիրում, որ այդ զգացմունքը կարող էր համեմատուել ամենաքնքոյշ մօր զգացմունքին։ Նախ նագործ դրեց իւր բոլոր ճարտարութիւնը, որ կոմուհուն համովէ՝ մնալ Մաղրիդում, բայց երբ որ տեսաւ՝ թէ նա հաստատ էր իւր վճռին, յայտնեց նորան, թէ նորանից չ' բաժանուիլ և կ' ուղեկցէ ամեն տեղ ուր որ էլ ձգէ նորան ճակատագիրը։ — Հնդիկները՝ թէ և շատ բաւական էին, որ ազատուել են իւրեանց անգութ փոխարքայից, բայց աւելի լաւ չէին տրամադրուած և դէպի նորա յաջորդը։ Նա էլ Սպանացի էր, ուստի նորանից ոչինչ չէին սպասում, բացի անարդարութիւնից, անդժութիւնից և շահասիրութիւնից։ Իզուր էին համբաւներ հասնում նոցա ականջին թէ կոմուր հեղէ, բարի և գթած։ Նոքա այնուամենայնիւ կրկնում էին. Զէ՞ որ նա Սպանացի՞ է։ Այս բառը աւելի սպասիկ էր արտայայտում նոցա ատելութիւնն ու ոիսը դէպի յաղթողները։ Այն ժամանակից՝ երբ Հնդիկները նուածեցին Ամե-

րիկան, նոքա գաղտնի կերպով վրէժիսով էին լինում Սպանացոց, որոնք սակայն չեն կասկածում այդ մասին։ Հարկադրուած լինելով տալ իւրեանց անգութ յաղթողներին ուկի և թանգաղին քարելիններ, նոքա թագցրին նոցանից այն գանձերը, որոնք աւելի մեծագին են մարդկութեան համար։ Միայն նոցա էր յայտնի քինայ ծառի բուժիչ կեղեի անսովոր ներդործութիւնը. բայց ընդհանուր համաձայնութեամբ նոքա երդուեցին միաբերան՝ երբէք չը յայտնել այդ խորհրդաւոր գաղտնիքն իւրեանց հարստահարիկներին։ Զնայելով որ Հնդիկներն անպայման կախումն ունէին նոցանից՝ հիմնեցին իւրեանց մէջ ներքին կառավարութիւն։ Նոքա ընտրեցին իւրեանց միջից մի առաջնորդ՝ որ պարտական էր հաւաքել ժողովուրդն և նորոգել երգումները։ Հնդիկներն՝ որոնք բնակվում էին փոքր գիւղերում և աւելի ազատ էին քան թէ հասարակաց գործեր կատարողները, նշնապէս մասնակցում էին այդ ժողովներին։ — Սովորաբար այս ժողովները նշանակում էին լեռների մէջ և այնպիսի առանձնացած տե-

զերում, ուր միայն Հնդիկները կարող էին
ներս մտնել: Այդ միջոցում գաղտնի ժո-
ղովների առաջնորդը Քսիմէոնն էր: Յու-
ղուած իւր ժողովրդի թշուառ դրութիւնից
և իւր անձնն ուղղած անարգանքներից,
նա սասաթիկ ատում էր Սպանացոց: Բայց
Հնայելով դորան՝ նա չէր սիրում անարդ և
նենագաւոր թունաւորութիւններն և երբէք
գործ չէր դնում այդ անդութ վրէժին-
դրութեան միջոցները՝ խստութեամբ ար-
գելելով այդ և իւր հայրենակիցներին: Քսի-
մէոնն ուներ մի որդի, որի անունն էր
Միրվան: Ծերունի Հնդիկը նորա մէջ էր
տեսնում իւր բոլոր բազդն և ամենից շատ
էր սիրում նորան:

Այս պատմութիւնից երեք տարի առաջ
Միրվանը պսակվեց Զիւմայի՝ մի սիրուն
Հնդկուցու հետ Լիմայի շրջակայքներից:
Բարի և գեղեցիկ Զիւման իւր ամուսնու
և երկու տարեկան տղայի կատարեալ եր-
ջանկութիւնն էր. նա սիրում էր նոցա
աշխոյժ բնութեան բոլոր քնքշութեամբ:
Բացի Քսիմէոնից Հնդիկները Հնագանդում
էին և մի ուրիշ պետի՝ Աղոն անունով:

Վերջինս ևս ուներ նոցա վելայ մեծ ազգե-
ցութիւն, չնայելով որ անգութ և խստա-
սիրա էր, իսկ նորա անզուսպ բնութիւնը
սահման չուներ: Նոր փոխարքայի գալուց մի
քանի օր առաջ՝ Քսիմէոնը նշանակեց գիշե-
րային ժողով այն հովտում; որտեղ բուս-
նում էր Անդանարար ծառը (այսպէս ա-
նուանում էին նորա քինայ ծառը): Երբոր
բոլոր Հնդիկները հաւաքվեցան, նա դիմեց
նոցա հետեւեալ խօսքերով.

— Սիրելի՛ և հաւատարիմ հայրենա-
կիցք: Սպանական թագաւորն ուղարկում
է մեզ նոր փոխարքայ: Կրիմնէնք այս կենդա-
նարար ծառի ճառ մեր ընդհանուր երգումը:
Ասելով այս, Քսիմէոնը բարձրացրեց ձեռ-
քերը դէպի երկինք և ազգու ձայնով գոչեց.

— Անգ երգվում ենք ամենքս հրապա-
րակաւ՝ երբէք չը յայտնել Եւրոպացոց
քինայ ծառի աստուածային պարգևեր՝ այն
միակ բարիքը, որ պահպանուել է մեզանում: Թող
դժբաղդ լինի այն անհաւատարիմ և
ուխտագրութ Հնդիկը, որ երկիւղից և թու-
լութիւնից և կամ սխալ համոզմանքնե-
րից դրդուած՝ կը մատնէ այս գաղտնիքը

մեր հայրենիքի նենդաւոր նուածողներին: Թողի լինի նա յաւիտեան մեր վրէժխնդրութեան առարկայ: Եթէ մեր մէջ գաւաճան յայտնուի, երդվում ենք գատել և սպանել նորան. իսկ եթէ նա կապուած լինի ամուսնական կապով, երդվումենք չը խնայել ոչ նորա կնոջն և ոչ նորա երեխայոց:— Բոլոր Հնդիկները միաձայն կրկնեցին նորա հետ այս երդումը:

— Իսկ ես, ասաց շարասիրա Ազոն, ձեր ամենքի առաջ կրկնումեմ, որ՝ եթէ մեր մէջ գտնուի մի Հնդիկ, որ կարող է ուխտադրուժ լինել, ես իմ ձեռքերովս կ'սպանեմ նորան, իսկ եթէ գաւաճնը կ'ունենայ կին և երեխայք, ես նոցա ամենքին կը կոտորեմ առանց որ և է դժուժեան:

Եյս խօսքերը նա ասաց ոչ առանց նպատակի: Ազոնն ատում էր Քսիմէոնի որդուն՝ Միրվանին, նախ այն պատճառով, որ սա, նորա կարծիքով, բաւական չէր ատում Սպանացոց, իսկ երկրորդը՝ նորա համար, որ նա նախանձում էր այն երջանկութեան, որ վայելում էր Միրվանը՝ շրջապատած իւր սիրելի Զիւմայի քնքութեամբ և սիրով:

Զար մարդիկ մէծ մասամբ նախանձու են լինում:

— Ազոն, ասաց Միրվանը, — կարելի է սուրբ պահել մեր գաղտնիքը՝ չունենալով քո անգիտութիւնը: Ոչ ոք մեզանից ընդունակ չէ ուխտադրուժ լինել: Քո սպառնալիքն անօգուտ է, որովհետեւ դորանով ոչոքին չես վախեցնիլ:

Զայրացած Ազոնն ուզում էր միայն պատասխանել, բայց Քսիմէոնն ընդհատեց նոցատաք վիճաբանութիւնը հասկացնելով նոցա, թէ անօգուտ է և մինչեւ անգամ վտանգաւոր է շարունակել աւելի երկար իւրեանց գաղտնի ժողովը: Աորանից յետոյ բոլոր Հնդիկները խաղաղութեամբ ցրուեցան:

II.

Մինչ այն՝ Հնդիկները, թագցնելով իւրեանց մէջ ոին ու թշնամութիւնը, պատրաստութիւն էին տեմնում փառաւերապէս հանդիպելու նոր փոխարքային:

Հնդիկների մատաղաշաս կանանց ամբոխը ծաղկեների զամբիւղները բռնած, կանգնած

Էր Լիմա քաղաքի մուտքում: Զիւման առաջնորդում էր նոյս: Կոմսուհին այնպէս զմայլած էր նորա գեղեցկութիւնից, աղնիւ դէմքից և նորա համակրելի կերպարանքի պարզութիւնից, որ մի քանի ժամանակից յետոյ ցանկացաւ նորան իւր մօտ ունենալ՝ այն Հնդիկ կանանց թւում, որոնք նշանակած էին զանազան պաշտօնական սպասաւորութիւններ կատարելու թագուհու ներքին սենեակներում: Շատ կարճ միջոցում կոմսուհին այնպէս սիրեց Զիւմային և մտերմացաւ նորա հետ, որ առաւ նորան իւր մօտ իրրեւ աղախին: Բէտարիչէն շատ անխոշեմ էր համարում կոմսուհու այս վարմունքը: Նորա երեւակայութիւնը, որ լի էր ամեն տեսակ պատմութիւններով Հնդիկների նենգութեան և անդթութեան մասին, ամենասարսափելի պատկերներ էր նկարում նորան ապագայում: Սակայն նա ոչ թէ իւր համար էր վախում, այլ ջերմ և անկերծ սիրած ընկերոջ և չէր կարող հանդիսատ լինել՝ տեսնելով թագուհու ունեցած մտերմութիւնը դէպի Հնդկուհին: Սպանացի սպասաւորները՝ որոնք շըջապատում էին

թագուհուն, աշխատում էին աւելի զրգոնք թէտարիչէին Զիւմայի դէմ: Նոքա սսացին նորան՝ թէ Հնդկուհին սաստիկ ծածկամիտ է, խորամանկ և փառասէր և թէ նա անհաշտ թշնամութիւն է տածում դէպի Սպանացիք: Բէտարիչէի կասկածը դէպի Զիւման օր ըստ օրէ սաստկանում էր, քանի որ կոմսուհին աւելի և աւելի մտերմանում էր նորա հետ: Զիւման իւր կողմից սիրեց անկեղծ և քնքոյշ սիրով բարի կոմսուհուն: Այնու ամենայնիւ նկատերով ընդհանուր ատելութիւնը դէպի իւր անձը, Հնդկուհին ամբողջ օրեր էր անցուցանում իւր սենեկում և ներկայանում էր միայն թագուհու հրամանով: Անցաւ արդէն չորս ամիս այն ժամանակից՝ որ կոմսուհին տեղափոխուել էր Լիմա: Այս ժամանակի ընթացքում նորա առողջութիւնը սաստիկ քայքայվել էր: Առաջ կոմն և նորա ընկերները վերագրում էին այդ՝ կլիմայի փոփոխութեանը, բայց տեսնելով՝ որ օր ըստ օրէ նա նուազում է ու թուլանում, ամենքը սկսեցին շատ անհանգիստ լինել: Դորանից յետոյ նա շատ հիւանդացաւ՝ մաշուելով անընդհատ ջեր-

մից: Ամեն տեսակ հնարքներ գործ էին դրել բժշկելու այդ հիւանդութիւնը, բայց բոլոր մնաց առանց ներդործութեան: Բէտառիչէն սաստիկ յուսահատութեան մջ էր: Կոմսը իսկոյն բժիշկներ բերել տուեց Սպանիայից: Բանիմաց բժիշկն ամենեւին չկարողացաւ հասկանալ կոմսուհու հիւանդութիւնն և խորհրդաւոր կերպով յայտնեց Բէտառիչէն, թէ նա նկատում է այստեղ մի անսովոր երեսյթ և իւր համար անհասկանալի մի պատճառ: Նորա յուղուած դէմքն և զսպողութիւնը թելազրում էին Բէտառիչէն մի սարսափելի միտք՝ չլինի՞ թէ իւր ընկերութիւն թունաւորուած է և մեռնում է անագան թօյնից: Այնուհետեւ նա ոչ մի րոպէ հանգստութիւն չունէր: Նա ուշի ուշով թագյնում էր կոմսից իւր սարսափելի կասկածները, որոնց սակայն յայտնեց կոմսուհու երկու մերձաւոր շքադիր օրիորդներին: Սոքա աւելի ևս հաստատեցին նորա երկիւղն իւրեանց յիմար պատմութիւններով. ամեն բանում սոքա մեղադրում էին Զիւմային, որն ամեն մի րոպէ մուտք ունէր կոմսուհու սենեակները: Առաջ Բէ-

ատրիչէն լիովին չէր հաւատում նոցա ևն թագրութիւններին, բայց տեսնելով՝ որ նորա ընկերութիւն օր աւուր աւելի ու աւելի մօտենում է գերեզմանին, վշտի ու սաստիկ անձկութեան մէջ նա հաւատաց նոցա չարամիտ բամբասանքներին: Կոմսը ոչինչ չկասկածելով, սկսեց շատ անհանդիստ լինել տեսնելով այսպիսի երկարատեւ և վշտագին հիւանդութիւննը: Այնու ամենայնիւ մի քանի ժամանակից յետոյ կոմսուհին յանկարծ իրան աւելի լաւ զգաց և այն յցար՝ թէ նա կ' առողջանայ, կենդանութիւն տուեց նորա բոլոր շրջապատողներին: Բժիշկը համարեա թէ բարեյածող ելք էր խոստանում հիւանդութեան, ընդհանուր կասկածները դադարեցան և Բէտառիչէն սկսեց ազատ շունչ առնել. այնուամենայնիւ նա յանձնեց կոմսուհու մերձաւորներին միշտ դիտել Զիւմային և ներս չթողնել իւր բարեկամուհու սենեակը, ուր սովորաբար պահպան էին հիւանդի գեղերն ու խմելիքը: Մինչ այն՝ Զիւման, որ իւր մատաղ ու ազնիւ հոգու բոլոր ուժով մտելմացաւ փոխարքայութիւն հետ, սաստիկ տիրում էր,

տեսնելով իւր բարի տիկնոջ տանջանքները: Նա զիտէր՝ որ կայ մի հաստատ միջոց նորա հիւանդութիւնը դարմանելու, բայց նա ոչ մի կերպով այդ չէր կարող յայտնել:

Նորան լաւ յայտնի էր, որ Հնդիկները միաձայն երդուել են՝ սուրբ պահել այս գաղտնիքը, և եթէ նա կարողանար զոհել իւր կեանքը՝ ոչ մի բոպէ չէր մտածիլ որ ազատէ իւր բարերարուհուն, բայց այս երդումը դրժելով՝ նա հաստատ մահ էր պատրաստում իւր սիրելի ամուսնու և անմեղ որդու համար: Մինչդեռ խստասիրտ Քսիմէնը՝ կամելով Հնդիկների մէջ կատարեալ հաւատ հաստատել դէպի Զիւման, տուեց իբրև գրաւական նորա միակ և սիրելի զաւակն անդութ Ազոնին և Տամրին: Վերջնս ևս նոցա առաջնորդների թւումն էր՝ թէւ սա այնքան անդութ չէր, ինչպէս Ազոնը, բայց նորանից պակաս չէր աստում Սպանացոց: Խեղճ Զիւման չէր համարձակում իւր վիշտն անդամիւր մարդուն յայտնել, սակայն ծածկաբար տիրում էր և յաճախ լալիս էր գառնադին: Նորա տիրու-

թիւնը շուտով հասաւ վերին աստիճանի: Կոմսուհին յանկարծ իրան աւելի վատ զգաց և այն թոյլ յօյսը՝ որ առ ժամանակ ուրախացրել էր ամենքին, բոլորովին անշետացաւ: Բժիշկը յայտնեց, թէ նա սաստիկ վախենումէ իւր հիւանդի կեանքի համար, թէ նորան դժուար կը լինի մաքառել ջերմի դէմ:

Ըստհանուր արտմութիւն էր տիրումպարատումը. կոմսը սաստիկ յուսահատվում էր, կոմսուհին զարմանալի արիութեամբ և ջերմ հաւատով տանում էր իւր ծանր հիւանդութիւնը:

Նա հանգիստ սպասում էր մահուան. չնայելով որ իրան լիովին երջանիկ էր համարում այս աշխարհում, բայց նորա անմեղ և գեղեցիկ հոդին միշտ պատրաստ էր երեւալ Աստուծոյ աշեղ դատաստանի առաջեւ: Նա՝ որպէս մի Ճշմարիտ քրիստոնեայ, ցանկացաւ հաղորդուիլ դրանից յետոյ քննչաբար վերջին «մնաս բարեաւը» ասաց իւր ամուսնուն և ամենքին՝ որ նորա շուրջն էին: Միւնոյն ժամանակ նա շատ ինդրեց կոմսին՝ հոգ տանել որքան հնար է, Հնդիկների

Հանգստութեան և բարօրութեան համար
և աղաջեց նորան՝ ի յիշատակ իւր, երբէք
չմոռանալ սիրելի Զիւմային: Կատարելով
այդ քրիստոնէական պարտքը, նա յանձնեց
իւր կեանքն ողորմած նախախնամութեան:

III.

ԱՄԵՂՅ Զիւման, որի առողջութիւնը սաս-
տիկ քայքայվել էր վերջին օրերը, իւր կրած
բոլոր հոգեկան տանջանքներից շուտով
հիւանդացաւ նյոյնպէս անընդհատ շերմով:
Երբ ջերմը մի քանի անդամ կրկնուեցաւ,
Միրվանը Հնդիկների հաւանառութեամբ, վը-
ռեց բերել կնոջ համար ամենայն օր քի-
նայի մի մի փոշի, որ նորան պէտք է բժշկէր:
Առաջին անդամ հարկաւոր էր ընդունել
զիշերուայ քնից առաջ: Երբ Զիւման մնաց
միայնակ, նա վեր առաւ փոշին և՝ նայելով
նորա վերայ, ասաց. «Մեծ և ողորմած Աս-
տուած: Ես վարվում եմ քո թելալրու-
թեամբ. ես կարող եմ ազատել իմ բարե-
րարուհուն՝ զոհելով իմ կեանքը, և այս
ես հաստատ վճռել եմ արդէն: Ես դադո՞ի

կերպով կը թափեմ փոշին՝ որ նշանակած
է ինձ համար, կոմսուհու խմելիքի մէջ:
Իմ հայրենսակիցները չեն կարող երեակայել
որ իմ մէջ այսպիսի հաւատարմութիւն կայ
դէպի իմ բարի տիկինը, իսկ նորա բժշկու-
իլը նոքա ի հարկէ կը վերագրեն բժշկակա-
նութեան ազգեցութեան: Ես վտանգի չեմ
ենթարկի ոչ ամուսնուս, ոչ որդուս և հաս-
տատ կը մնամ մեր երդմանը: Ես գիտեմ,
որ կը մեռնիմ, բայց զորանով կ'ազատեմ
նորան: Իմ կեանքն ունայն է, իսկ կոմսու-
հու կեանքն անշրաժեշտ է թշուառների
և Ճնշեալների պաշտպանութեան համար:
Երեկ ես ականատես էի՛ ի՞նչպէս ջերմ ա-
զովում էր նա այս անգութ Հնդիկների
համար, որոնք կարող էին ազատել նորան:
Միրելի բարերարուհի իմ: Ես լսեցի՛ ի՞նչ-
պէս արտասանեցիր գու քո հաւատարիմ
Զիւմայի անունը: Երդվում եմ՝ որ կ'ազա-
տեմ քերգ: — Ասելով այս խօսքերը՝ Զիւման
զգուշութեամբ պահեց քինայի փոշին և
սկսեց մտածել թէ ի՞նչպէս մտնի կոմսուհու
առանձնասանենեակը: Նա տեղեակ չեր այն
բոլոր սարսափելի կասկածանքներին, որոնց

նպատակն ինքն էր և չէր նկատում, որ կում
սուշու մերձաւոր շքաղիր օրիորդները,
նորա հիւանդութեան ժամանսակից՝ ոչ մի
չնդկուհու չէին թողնում նորա առանձ-
նասենեակը: Այս հանգամանքը ջիւման
վերագրում էր ջերմեռանդ հոգացողութեա-
նը սիրելի հիւանդի համար առանց ու-
րիշի օգնութեան: Երկար մտածմունքներից
յետոյ՝ նա վճռեց մտնել առանձնասենեակը
երեկոյեան, իսկ եթէ նորան մէկը նկատէ,
նա միշտ կարող է ասել՝ թէ եկել է տեղե-
կանալու իւր սիրելի տիկնոջ մասին: Հան-
գատանալով բոլորովին՝ չնդկուհին սկսեց
ուշաղրութեամբ քննել, թէ ի՞նչպէս անէ,
որ չմտնի կոմսուհու ննջարանը, որի միջով
անհնարին էր անցնել: Այս նպատակով նա
մտաւ երկար կորիդորը և մեծ էր նորա
ուրախութիւնը՝ երբ որ նկատեց, թէ ա-
ռանձնասենեակից՝ փոքրիկ դռան միջով,
մի առանձին ելք կար դէպի կորիդորը:
Բանալին կողպէկի մէջն էր: Այս կերպով
նա վճռեց մտնել գիշերը այս կորիդորով
իւր մեծահոգի դիտաւորութիւնը կատա-
րելու:

Մինչդեռ Բէատրիչէի հրամանով պալա-
տում ամենքն ուշաղրութեամբ հետևում
էին խեղճ՝ ջիւմայի ամեն մի քայլին: Մի
և նոյն օրը Բէատրիչէին յայտնի էր, որ
Միրվանն եկել էր իւր կնոջ մօտ և երկար
խօսում էր նորա հետ կամաց ձայնով, այն-
պէս որ անկարելի էր լսել նոցա խօսակ-
ցութիւնը:

Միրվանն մնաս բարեաւ ասելիս ջիւմա-
յին, շատ շփոթուած էր երեսում: Իւր ա-
մուսնու գնալուց յետոյ՝ չնդկուհին եր-
կար անցուգարձ էր անում կորիդորում,
ուշաղրութեամբ նայելով դռների վերայ և
միեւնյն ժամանակ աշխատելով, որ ոչ ոք
իրան չնկատէ: Այս բոլոր տեղեկութիւն-
ներն անսովոր կերպով շփոթեցրին Բէատրի-
չէին: Նա իսկոյն հասկացաւ, որ ջիւմա-
յին հարկաւոր էր մտնել կոմսուհու ա-
ռանձնասենեակն և հրամայեց ամենախստ
կերպով հետևել նորան:

Առանձնասահնեկում նա ոչ ոքին թոյլ
չտուեց մնալ իսկ բանալին հրամայեց թող-
նել կողպէկի մէջ: Այս բոլորի մասին նա
իսկոյն յայտնեց փոխարիքային, որը՝ թէւ

լիովին հաւատ չէր ընծայում նորա կաս-
կածանքներին, այնու ամենայնիւ այս լուրը
սաստիկ վրդովից նորան: Նրքա երկուսը
վճռեցին սպասել ջիւմայի առանձնասե-
նեակ գալուն: Երեկոյեան մօտ տասը ժամին
Բէատրիչէին ասացին՝ որ ջիւման զդու-
շութեամբ ցած է իջնում սանդուղներից:
Կոմն և Բէատրիչէն շնչասպառ թագնու-
եցան առանձնասենեկում: Մի քանի բօպէից
յետոյ գուռը կամաց բացուեցաւ և մոտաւ
Հնդկուհին: Նա գունատ էր, յուղուած և
դանդաղ գնում էր շքեղ գորգի փրայով:
Առաջ նա կանգնեցաւ դռան մօտ, որ հա-
զորդակցութիւն ունէր կոմսուհու սենեկի
հետ և ականջը մօտեցրեց ծակին: Համո-
զուելով՝ որ ամեն տեղ խաղաղ ու հան-
դարս է, մօտեցաւ սեղանին, որի վերայ
դրած էր խմելիքի շեշն և ձգեց նորա մէջ
քինայի փոշին: Փոխարքան սարսափից և
բարկութիւնից այլայլուած՝ մի վայրկե-
նում արձանացաւ սենեկի մէջ տեղն և
բոնելով Հնդկուհու ձեռքը, բացականչեց.
— Զարագործ կի՞ն. ի՞նչ ես թափել կոմ-
սուհու խմելիքի մէջ:

Խեղձ Ջիւման բոլորովին շփոթուեցաւ,
մահուան գունատութեամբ ծածկուել էր
նորա սիրուն դէմքը. նորա ըրթունքները
ջզային ցնցում էին արտայայտում՝ արտա-
սանելով անկապ խօսքեր. շուտով նա ուշ-
քից դնաց: Նորան իսկոյն տարան իւր
սենեակը: Կոմսն ու Բէատրիչէն վճռեցին
թագնել կոմսուհուց այս երեւակայած յան-
ցանքը:

— Կոմսուհին իրան յատուկ բարու-
թեամբ կը խնդիր ներել այս չարագործ
կնոջը, ասաց կոմսը, և ոչինչ աշխարհիս
երեսում ինձ չկ սախպիլ ներել նորան:

IV.

Ջիւմայի՛ փոխարքայուհուն թունաւո-
րելու դիտաւորութեան համբաւը շուտով
տարածուեց պալատում և քաղաքի մէջ: Միենոյն երեկոյին Հնդկուհին դատապարտ-
ուած էր և բանտ ուղարկուած: Միրվանը
լսելով նորան պատահած դժբաղդութեան
մասին, դնաց Աղոնի և Տամիրի մօտ:

— Որդիս ձեր ձեռքումն է, ասաց նա նոցա: Խոստացէք ինձ, որ՝ եթէ ես և կինս չենք մատնիլ մեր ընդհանուր գաղտնիքը, կյանձնեք նորան մեր մահից յետոյ իմհօրբ:

— Խոստանում ենք, ասաց Աղոնր, բայց խմացի՛ր, որ և ամենաշնչին կասկածը մեր երդման հաստատութեան մասին կարող է մահուան վտանգի ենթարկել նորան:

— Մենք գիտենք՝ թէ ի՞նչպէս պէտք է թագջնել նորան և աղիւ կերպով մեռնել պատասխանեց նորան Միրվանը:

Անգութ Հնդկին տալով մնասբարել՝ նա կամաւ գնաց բանտ, ուր կամենում էր բաժանել սիրելի կնոջ հետ նորա վիճակի դառնութիւնը: Նա վազուց հասկացել էր նորա կոմուհուն փրկելու մեծահոգի դիտաւորութիւնը, բայց այլապէս չէր կարող յայտնել սորա մասին եթէ ոչ ենթարկելով իւր զաւակը մահուան վտանգին. ուստի նա վճռեց մեռնել թշուառ Զիւմայի հետ:

Խորհուրդ էր նշանակած միւս օրը, որպէս զի հարց ու վորձ անեն և դատապարտեն Միրվանին և Զիւմային: Մեծ դաշնիքի դուռը բաց էր, և բոլոր Հնդիկներին յայտ-

նի էր, որ նոքա կարող են ներկայ գտնուել գործի քննութեան ժամանակի: Նոքա ամենեքեան հաւաքվեցան իւրեանց զիսաւորների Քսիմէոնի, Աղոնի և Տամիրի առաջնորդութեամբ: Եղթայակապ ներս բերին թշուառ դատապարտեալներին: Զիւման՝ տեսնելով Միրվանին, որի ներկայութիւնը մինչև այս րոպէն յայտնի չէր իւսան, յուսահատ ընկաւ դատաւորների ուգն և բարձր հեծեծանքով բացականչեց. «Նա անմեղ է, նա չգիտէր իմ դիտաւորութիւնն և բոլորովին մասնակից չէր ինձ»:

— Զիւմա, ասաց նորան Միրվանը, — քո մահն անխուսափելի է: Միթէ դու կարծում ես, որ ես նորան չեմ բաժանիլ քեզ հետ: Ես դատաստանի հրամանով չեմ փակուած բանտում, այլ իմ սեպհական կամքով: Արիութեամբ տանենք մեր առաջնիկայ պատիմն և ազատենք մեր որդուն:

Հնդկուհին հասկացաւ բոլորն և արտասուեց: Հարցափորձը սկսուեցաւ: Զիւման չէր կարող հեղիքել այն բոլոր փաստերը, որոնց ականատես էին ինքը փոխալքան և Բէատրիչէն: Երբ հարցրին նորան՝ թէ որ-

տեղից նա դտաւ այն փոշին, որ թափել
էր կոմսուհու խմելքի մէջ, Միրվանն ա-
սաց, թէ ինքը բերեց իւր կնոջը: Զիւման
կրկին շփոթուեց և սկսեց ապացուցանել
թէ իւր ամուսինն անմեղ է:

— Ի՞նչ նպատակով կատարեցիք դուք
այս յանցանքը, հարցրեց նորան դատաւորը:
— Ճշմարիտն ասած՝ փոխարքայուհուն
թունաւորելու նպատակով չէր:

— Ապա ի՞նչու համար թափեցիք փո-
շին: Արդեօք չէիք կամենում այս միջոցով
թժշկել կոմսուհուն:

Երբ առաջարկեցին այս հարցը՝ Զիւման
գողգողաց և նորա աչքերը հանդիպեցան
անդութ Ազնի հայեացքին: Նորա սոսկալի
տեսքը կատարեալ շփոթութեան մէջ ճգեց
նորան: Զիւմային թւում էր մի սարսափելի
տեսարան՝ իբր թէ նա սպանում է իւր
սիրելի զաւակին:

Յուզուած և սարսափած նա հազեւ լսե-
րի ձայնով շնչաց. չէ չէ, ևս ոչ մի դեղ չգի-
տեմ, որ կարողանար կոմսուհուն թժշկել:
— Ուրեմն այդ թոյն էր. դուք չէք կա-
րող այս հեղքել:

— Ես ոչինչ չեմ հեղքում:
— Եթէ այդպէս է՝ ասացէք ուրեմն ձեր
արարմունքի իսկական պատճառը:
— Ես ոչինչ չեմ կարող ասել. ես պէտք
է լուս: Այնուհետեւ եկաւ կոմսուհու բժիշ-
կըն իբրև վկայ և դատական հարցման
և թարկվեց:

Որովհետեւ բժշկական միջոցներով ան-
կարելի էր օգնել հիւմանդութեանը՝ իրան
անհասկանալի լինելով, — ուստի նա դրա-
կանապէս ասում էր, որ կոմսուհու հի-
ւանդութեան պատճառը — թոյնն է: Այս
անարդ Հնդկուհու արարքներն աւելի հա-
մոզեցին ինձ, աւելացրեց բժիշկը, որ նա
տուել էր առաջ փոխարքայուհուն թոյնի
մի փոքր փոշի, բայց վախենալով որ մի
գուցէ մատաղ տարիքն և ուշադիր հոգա-
տարութիւնը յաղթեն իւր յանցաւոր դի-
դիտաւորութեանը, նա աւելացրեց թոյնի
շափը: — Այս ցոյցերի ժամանակ բոլոր դա-
տաւորներն աննկարազրելի կերպով զայրա-
ցան: Նոքա վճռեցին այլրել խարոյկի մէջ
Միրվանին և Զիւմային, որոնց մեզարքեցին
կոմսուհուն թունաւորելու յանցաւոր դի-

տաւորութեան համար: Լսելով այս սարսա-
փելի վճիռը՝ Միրվանը հեղոսական արիու-
թիւն ցոյց տուեց: Զիւման ընկաւ իւր
ամուսնու ոտքն և բարձր հեծեծանքով
կրկնում էր. «Ես ենթարկեցի քեզ կորստեան.
այս միաքը մահուան չափ տանջում է ինձ.
ների՞ր, ների՞ր ինձ»:

— Հանգստացիր, հոգեակս, ասաց նորան
Միրվանը: Մենք միայն կարող ենք յանդի-
մանել մեր դատաւորներին նոցա անդժու-
թեան համար, բայց նոքա իւրեանց խիստ
վճռով ազատում են մեզ մշտական ստր-
կութենից և տանջանքներից: Մի քանի ժա-
մկց յետոյ մենք ազատ կը լինիք նոցա
ծանր բռնութիւնից:

Այս խօսքերը շարժեցին մինչև անգամ
Ազոնի կարծը սիրաբ:

— Միրվան, դիմեց նա նորան,— հան-
գիստ եղիր քո որդու ապագայի մասին. նա
ինձ համար աւելի սիրելի կը լինի, քան իմ
հարազատ զաւակները:

Երբ ժողովն աւարտվեց, դատաւորները
հրաման տուին՝ որ առաւօտեան ժամը ըն-
ին պատրաստ լինի խարցիր: Մինչդեռ փո-

խարքայուհին քաշում էր իւր վերջին օրե-
րը, բժիշկը յայտնեց կոմսին, թէ ինքն
ամենեին կտրիլ է իւր յոյսը հիւանդի ա-
ռողջանալուց և թէ մի շաբաթից աւելի նա
չի ապրիլ:

Կոմոք բոլորովին յուսահատ և տիւուր
լինելով՝ ամենեին ցանկութիւն չունէր մեղ-
մացնել դատապարտեալների վիճակը: Զիւ-
ման նորա աչքումը մի ամենագարշելի արա-
րած էր, որն իւր յանցանքով դրկում էր նո-
րան իւր թանգագին և անկեղծ սիրով սիրած
կնոջց: Նորա վիրաւորած սիրաը հեռու
էր զժութիւնից: Սակայն նա հրամայեց
ներումն յայնել Միրվանին, եթէ նա խոս-
տովանի իւր յանցանքը:

— Հաղորդեցէք փոխարքային, ասաց Միր-
վանը ծառային՝ որ եկել էր նորա մօտ,—
որ եթէ նա անգամ Զիւմային ներումն
խոստանար, այն ժամանակ էլ ոչ մի բառ
չէր լսիլ ինձանից: Փոխարքան՝ ցանկանա-
լով վկայ լինել կիմայում յանցաւորների
մահուան տեսարանին, գնաց քաղաքից
դուրս՝ իւր ունեցած պայտար, որ գտնվում
էր քաղաքից մի քանի մղոն հեռաւորու-

թեամբ: Իզուր խեղճ Քսիմէոնն երկար մտա-
ծում էր, թէ ի՞նչպէս վիսկէ Միրվանին և
Զիւմային. բոլոր նորա մտածմունքն անօ-
դուտ էն: Նա ուզում էր խորհուրդ կազ-
մել իւր ընկերներից, բայց Հնդիկներն այս
բոլոր ժամանակ այնպիսի մի խիստ հսկո-
ղութեան ներքոյ էին, որ նորան չյաջողեց
մինչև անգամ խօսել առանձին Ազոնի և
Տամիրի հետ: Խսկօյն հրաման էր հրատա-
րակուած, որ Լիմա եղած բոլոր Հնդիկները
պէտք է անպատճառ ներկայ գտնուին մա-
հուան գատավձնին: Նոյցա ամենքին պա-
տուիրած էր անզէն լինել: Սպանական պահ-
նակը կրիմսապատկած էր: Բայցի այս՝ երկու
հարիւր զինուոր պէտք է ուղեկցէին յան-
ցաւորներին: Երբ ամբողջ քաղաքը սաստիկ
խոռվութեան մէջ էր առաջեկայ մահուան
վճռից՝ փոխարքայութիւն, ոչինչ տեղեկու-
թիւն ըրւնենալով պատահած իրերի մա-
սին, հարումաշէր լինում ծանր հիւանդու-
թիւնից: Նորա խորամուխ և քնքոյշ սրտից
գերծ չմնաց նաև պալատի ընդհանուր և
խոռվայրյղ անհանգստութիւնը: Նա՝ հարց
ու փորձ անելով Բէատրիչէին ընդհանուր

շփոթութեան պատճառի մսաին, իսկոյն
հասկացաւ, որ նորանից ինչոր ծածկում էն:
Օգտուելով Բէատրիչէի բացակայութիւ-
նից, որ սահմանականում էր իւր սենեակը՝ այնտեղ իւր վշտին լիովին անձ-
նատուր լինելու, կոմսուհին կոչեց իւր ա-
ղախնին և սահման՝ նորան՝ որ բոլոր պա-
տահածը պատմէ: Զհամարձակելով անտես
առնել իւր տիկնոջ հրամանոր՝ աղախինը
մանրամասնութեամբ հաղորդեց նորան բո-
լոր պատմութիւնը, աւելացնելով որ Միր-
վանն ու Զիւման ամենելին չեն գերքում իւ-
րեանց յանցաւոր դիտավորութիւններն, այլ
ընդհակառակը նոյցանով պարծենում էն: Այս
անսկնեալ և սարսափելի գէպքը սաստիկ
զարմացրեց և վշտացրեց կոմսուհուն: «Ողոր-
մած Աստուած, բացականչեց նա, —լուսա-
ւորի՛ր միտքս և սիրտս, պայծառացրու ինձ
քո խմաստութեան և բարութեան լուսով»:
Այս խօսքելն ասելով նա հրամացեց պատ-
րաստել մի բաց պատգարակ. միենայն ժա-
մանակ նա վեր կացաւ անկողնից իւր աղա-
խինների օգնութեամբ, հագաւ իւր երկար
մարմաշեայ զգեստն և՝ չնայելով Բէատրիչէի

և իւր շքաղիր օրիորդների հեծեծանքներին, հրամայեց՝ որ նստեցնեն իրան պատգարակի մէջ և չորս ստրուկ հանդիսով տանեն իրան դէպի խարոյկը. խակ հինգերորդը նորա զլինի վերայ բռնած ունէր մի մէծ մետաքսեայ հովանի:

V.

Ուղեղ ցերեկուայ տասներկու ժամին Միլիվանին և Զիւմային դուրս բերին բանտից և ուղարկեցին դէպի խարոյկը:

— Խեղձ Զիւման զունատ, յոդնած անքուն և անհանգիստ զիշերից՝ ոյժ չունէր մենակ գնալու և յենփում էր իրան ուղեկցող քահանայի ձեռքին: Երկու զինուոր բոնել էին նորա ձկուն և նազուկ իրանից: Ժողովրդի անթիւ բազմութիւնը խոնվում էր բոլոր փողոցներում հիտաքըքութիւնը թիւամբ նայելով յանցաւորների վերայ: Յանկարծ հանդիսականների խուռն բազմութեան մէջ Զիւման տեսաւ Աղոնին՝ որ բռնած ունէր ձեռքում նորա զաւակը:

Մի աղաղակ՝ լի յուսահատութեամբ դուրս թռաւ գիբաղդ մօր կրծքից: Այս աղաղակն այնչափ սրտառուչ էր և անկեղծ՝ որ խորին կերպով ներգործեց ներկայ գտնուողների սրտերի վերայ: Իւր վերջին ոյժը հաւաքելով, Հնկուհին դուրս պրծաւ զինուորների ձեռքից և զարմանալի ուժգնութեամբ ընկաւ Աղոնի վերայ՝ որպէս զի վերջին անգամ զրկէ իւր սիրելի երեխային: Զերմ, այրող արցունքներն առատ թափվում էին նորա սիրուն աչերից:

— Զիւմա, ասաց նորան Աղոնը, — արիութեամբ զինաւորութիւն և յիշը որ մենք վրէժինդիր կը լինինք ձեր տեղը:

— Ես վրէժիննզրութեան չեմ ձգտում, պատասխանեց Հնկուհին: Ես ցաւում եմ՝ որ չկարողացայ փղիւ իմ սիրելի տիկնոջ:

Նա այլև ժամանակ չունէր ոչինչ խօսելու, որովհետեւ զինուորները սպասում էին նորան: Վերջին մաս բարեաւն ասելով իւր սիրելի որդուն, նա կարծես աւանդում էր հոգին:

Մի անմեկնելի թախիծ և տրտմութիւն պաշարել էր նորան: Ճանապարհը տանում

էր մի սքանչելի արմաւենու Շեմելիքով՝ որի
վերջում արդէն երեռում էր վառուող խա-
րշյկը: Նորա սև ծուխը գունդ գունդ բարձ-
րանում էր դէպի երկինք: Տեսնելով այս
սարսափելի տեսարանը Զիւման բոլոր մարմ-
նով գողաց: Ոչ մի բոաէ նորան չէր թող-
նում այն միտքը թէ նա հեռանում է իւր
ամուսնուց և որդուց: Նա տեսնում էր որ
տանջողական մահը մօտ է և անխուսափելի:
Նորա ոյժը սպառվում էր և արիւնը սառ-
չում երակների մէջ. մահացու գունատու-
թիւնը ծածկել էր նորա սիրուն դէմքը: Նա
աւելի պինդ յենուեց քահանայի ձեռքին,
որը միխթարելով և զանազան սրտառուչ
խրատներ տալով նորան, համոզում էր
զզչալ:

— Զիւմա, ասաց նորան Միլվանը, մի
վախենալ մահից: Նա այնքան տանջող չէ,
որչափ որ դու երեակայում ես: Տես այս
սարսափելի գնտաձեւ ծուխը մի վայրինում
կը խեղի մեր շունչն և կը յանձնէ մեզ
յաւիտենականութեան գիրկը:

— Ես անզօր եմ յաղթել խոսվութեանս
և սարսափիս, երբ տեսնում եմ այս ահա-

որ բոցը, հաղեւ լսելի ձայնով շնչաց
ջիւման:

Մինչդեռ նոքա ամեն քայլափոխով ա-
ւելի և աւելի մօտենում էին բոցավառ և
չարագուշակ խարոյկին, որին վիճակուած
էր կտրել նոցա մատաղ կեանքը. Հնդիկնե-
րի ամբոխը մռայլ և տխուր դէմքերով
շրջապատում էր խարշյկը: Նոցանից ամեն
մէկը բռնած ունէր նոճեայ Ճիւղ, որ ըստ
նոցա սովորութեան խորին սուզի նշան էր:
Սպանացի պահապանները շրջապատում
էին նոցա:

Յանկարծ լսուեցաւ ձիու ոտների ձայն
և երեաց մի ձիաւոր, որ շատ արագ էր
արշաւում:

— Կանդնեցէ՛ք, կանգնեցէ՛ք, բարցրաձայն
գոչում էր նա: Յանուն փոխարքայուհու՝
կանգնեցէ՛ք: Նա ինքն խսկոյն գալու է այս-
տեղ:

Այս խօսքերի միջոցին ամեն ինչ լռեց:
Զիւման ծնկաչոք ջերմ աղօթում էր առ
Ամենակարողը: Նա չէր վնտահանում լիովին
յոյս տածել: Մի քանի լոպէից յետոյ ե-
3*

բեաց փոխարքայուշու պատգարակը՝ որ ա-
րագութեամբ մօտենում էր խարշիկն:

Պատգարակը կրողները կանգնեցան՝ հա-
ւասարութելով թշուառ դատապարտեալների
հետ: Սպանացի պահապաններն իսկոյն պա-
տիւ տուեն փոխարքայուշուն: Հնդիկները
մօտեցան և շրջապատեցին պատգարակը:
Փոխարքայուշին՝ վեր քաշելով քողը, բա-
ցեց իւր սիրուն և նիշարած դէմքը.

— «Թէւ ես ինքս իրաւունք չունիմձեզ
ներելու, ասաց նա յանցաւորներին, բայց
ես համոզուած եմ՝ որ կը ստանամ ձեզ հա-
մար ներումն փոխարքայից: Մինչ այն՝ ես
պատասխանատու եմ այս գժբաղդների հա-
մար: Ազատեցէք նոցա շղթաներից և հանդ-
ցըլք այս սարսափելի խարոյկը, ասաց նա
իւր մօտ կանգնած աստիճանաւորին: Եթէ
ես առաջ տեղեակ լինէի սորա մասին, ես
թցյլ չէի տալ այսպիսի մի չար պատիժ
գործադրելու: Լսելով այս խօսքերը՝ Հնդիկ-
ները ձգեցին նոճեայ ձիւղերն և հիայ-
ման և ուրախութեան խլացուցիչ աղաղակ-
ները թնդում էին ամեն կողմից. «Կեցցէ՝

փոխարքայուշին», գոչում էր ժողովուրդը:
Քսիմէոնն իսկոյն գուրս եկաւ ամբոխի միջեց
և դիմելով Հնդիկներին ասաց. «Եղբարք և
հաւատարիմ հայրենակիցք, ազատենք փո-
խարքայուշուն, ազատենք բոլոր թշուառ-
ների և տառապեալների այս բարերարու-
հուն»:

— «Ազատենք, ազատենք», կրինում էր
ժողովուրդը: «Ողորմած Աստուած. մինչեւ
վերջը հասցրու քո մեծ գթութիւնը», ծնկա-
չոք բացագանցեց Զիւման: Թագուշին հրա-
մայեց Միրվանին և Զիւմային հետեւելիւր
պատգարակներն, որին ուղեկցում էր բազմա-
թիւ ամբոխը, անդադար փառաբանելով
նորա գթութիւնն, և նոյն ձանապարհով
գնացին պալատը:

Երբ թագուշին վերադարձաւ տուն՝ նո-
րան իսկոյն անկողին դրին: Յոգնածութիւնն
և սաստիկ հոգեկան խուզութիւնն այնպէս
թուլացրին նորան, որ նա երկար ժամանակ
չէր կարող ուշքի դալ: Երբ նա՝ մի փոքր
հանգստանալուց յետոյ, կանչեց իւր մօտ
Միրվանին և Զիւմային, մեկնեց նոցա իւր
նիշարած ձեռքերը: Հնդկուշին ծածկում էր

նոցա իւր համբջյաներով և արտասուբռովէ թէատրիչն կրամայից առանձնացնել Հնդիկ-ներին դրացի սենեակը: — Թողէք նոցա ինձ մօտ, ասաց կոմուհին, նոցա աղօթքն առ Ամենակարողը բաց կանէ ինձ համար դրախտի գոներն և Տէրը կընդունի իւր մօտ մեղաւոր հոգիս:

— Աստուած իմ, ընդհատեց թէատրի-չն, ես չեմ կարող տեսնել ձեզ չարագոր-ծներով պատած, որոնք դիտաւորութիւն ունեին ձեզ թունաւորելու:

— Թողէք նոցա, կրկնեց փոխարքայու-շին, — նոցա վերայ նայելով, ինձ ախորժելի է զգալ, որ ես ներում եմ և կեանք եմ տալիս նոցա: Այս քրիստոնէական զգաց-մունքը լցնում է վշտակիր հոգիս անդոր-րութեամբ և երջանկութեամբ:

— Իմ բարերարուհիս, ասաց Զիւման բարձրաձայն հեկեկալով, եթէ հաճոյ լինի Աստծուն կատարել իմ վերջին ինդիրը, դուք այն ժամանակ կը հասկանաք՝ թէ ի՞նչպէս անկեղծ էր սիրում ձեզ ձեր դժբաղդ Զիւման:

Այս խօսքերը սասաթիկ տժգոհութիւն պատճառեցին թէատրիչն: « չարասիրտ կեղծաւոր », գոչեց նա:

— Մի անսպատուէք նորան, ընդհատեց կոմուհին: Տեսէք նորա արցունքը: Զիւ-մա, զիմեց նա Հնդկուհուն, — ես քեզ այնպէս անկեղծ և ջերմ սիրով էի սիրում, որ գէպի քեզ ոչ մի վատ զգացմունք չու-նէի: Դուք ելիուադ ակամայ հարկադրե-ցիք ինձ ըմբռնել այն բոլոր երջանկութիւ-նը, որը զգում է ամեն մի քրիստոնեայ՝ նե-րելով իւր մերձաւորին: Տայ Աստուած, որ դուք ես այնպէս անկեղծ ներէք ձեր թշնա-միներին, որպէս ես ձեզ եմ ներում:

Զիւման ընկաւ իւր բարերարուհու ոտ-քն և քիչ էր մնացել՝ որ խոսապվանէր նորա առաջ բոլորը, բայց Միրվանն արգելեց նո-րան. « Զիւմա », ասաց նա նորան, « սուրբ պահիք մեր գաղտնիքն և հաւատա՛, որ ողբրմած նախախնամնութիւնը, որին այն-պիսի մեծ հաւատ է ընծայում թագուհին, բաց կանէ բոլոր Ճշմարտութիւնն և կը փրկէ նորա թանգագին կեանքը: Ես հա-մոզուած եմ, որ մենք արդարացած կը լի-

Նինք»։ Նա արտասանեց այս խօսքերն այն-
պիսի հաւատով, այնպիսի անկեղծութեամբ,
որ մինչեւ անգամ թէատրիչն հիսցաւ նորա
հոգու խաղաղութիւնից։

Իզուր փոխարքայուհին հարց ու փորձ
էր անում Միրվանին, իզուր նա համոզում
էր նորան՝ յայտնել բոլոր ճշմարտութիւնը.
նա կամակորութեամբ լոռում էր։

VI.

Կոմսուհին մի սուրհանդակ ուղարկեց
կոմսին, յայտնելով նորան այն ամենը ինչ
որ պատահելէր և աղաչելով, որ նա շուտով
դայ։ Անցել էր արդէն մի քանի ժամ, սա-
կայն կոմսը դեռ չէր վերաբառնում։ Զհաս-
կանալով այսպիսի երկարատեւ բացակայու-
թեան պատճառը, կոմսուհին մտածում էր
մի այլ սուրհանդակ ուղարկելու, երբ յան-
կարծ աղմուկ և բարձրաձայն խօսակցութիւն
լսուեց գաւթում։ Կոմսուհին իսկոյն ձա-
նաչեց իւր ամուսնու ձայնը։ Հաղիւ փոխար-
քան կարողացաւ մտնել իւր կնոջ սենեակը,
սա հանդիպեց նորան այսպիսի խօսքերով։

«Ների՞ր, ի՛ սէր Աստուծոյ ների՞ր յանցա-
ւորներին»։

— Աստուծած ինքը կը ներէ և ողորմած
կը լինի դէպի նոցա, ասաց փոխապքան,
քո թանգագին կեանքի փրկութեան հա-
մար։ Բոլոր ներկայ գանուղիները տարա-
կուսանքով նայեցին միմեանց վերայ։ Կոմսը
մօտեցաւ Զիւմային և յանձնեց նորան նորա
որդուն, որին նա բռնած ունէր իւր ձեռ-
քում։ Զիւման ուրախութիւնից աղաղա-
կեց՝ գրկելով իւր սիրելի զաւակը։ Կոմսին
հետեւում էր ծերունի Քսիմէոնը՝ որ մօտե-
նալով Միրվանին, հանդիսաւոր կերպով
սասց։

— Միրելի Միրվան։ Բոլոր Հնդիկների
հաւանութեամբ մենք վճռեցինք յայտնել
փոխարքային մեր թանգագին փոխարքա-
յութու կեանքն ազատելու միջոցը։ Մեր
գաղտնիքը նորան արդէն յայտնի է. իսկ
նորա լիովին հանգստութեան համար՝ մենք
ընդունեցինք նորա ներկայութեամբ քինայի
մի մի փոշի։ Զիւման անսահման երջան-
կութեան մէջ՝ Ծնկաչոք Զերմաջերմ շնոր-
հակալութիւն էր մաստուցանում Աստը-

ծուն նորա ողորմութեան համար: Կոմսու-
հին՝ որ տարակուսանքի մէջ էր, խնդրում
էր կոմսին՝ մանրամասն պատմել իրան բո-
լոր եղելութիւնը: Իւր ամուսնուն ուշա-
դրութեամբ լսելուց յետոյ՝ նա արտա-
սուալից աչքերով ասաց.

«Մէ՛ծ և ողորմած Աստուած: Հոգիս լի է
ջերմ երախտագիտութեամբ դէպի քեզ՝ իմ
սիրելի և թանգագին Զիւմայի ազատու-
թեան համար, որը պատրաստ էր իւր բոլոր
երջանկութիւնը ինձ զոհել: Ենորհակալ
իմ Քեզանից, որ Դու արդարացրիլ նորան
ամենքի առաջ և չթողի՞ր այս սարսափելի
անցքը կատարուելու»:

— Մէնք ամենքս պէտք է շնորհակալ
լինինք Աստծուն նոցա հրաշալի վրիու-
թեան համար, աւելացրեց փոխարքան: Նո-
ցա ծնողական զգացմունքն և հաստատա-
կամութիւնը արժան են խորին յարդանաց:

— Կոմսուհու զգացմունքներն ևս առա-
ւել հրաշալի են, ասաց Զիւման: Նա մեզ
չարագործ էր կարծում՝ որոնք իբր թէ
որոգայթ էին լարել իւր կեանքի դէմ:

— Նա նոյնակս վարձատրուած կը լինի
այսպիսի մի քրիստոնէական գործի համար,
պատասխանեց կոմսը: Դուք ձեր կողմից
կը փրկէք նորա կեանքը: Ահա այս թան-
գագին փոշու երկու անգամ ընդունելու
քանակը. մինը փոխարքայուհու համար,
միւսը՝ Զիւմայի: Փոխարքան իւր ձեռքով
պատրաստեց գեղը երկու հիւանդների հա-
մար: Զիւման առաջնոր խմեց իւր բաժինը
և տուեց փոխարքայուհուն նորա բաժակը:
Կոմսուհին՝ վաղամերձ բժշկուելու կենդա-
նի յուսով, գգուանքով գրկում էր իւր
սիրելի ամուսնուն, իւր ընկերուհուն և եր-
ջանիկ Զիւմային: Բէատրիչէն և բոլոր
շքաղիր օրիորդները շրջապատեցին Հնդ-
կուհուն և ամենասրտառուչ խօսքերով
յայտնում էին նորան իւրեանց շնորհակա-
լութիւնը՝ դէպի կոմսուհին ունեցած նորա
հաւատարմութեան համար: Այս սրտա-
շարժ ահսարանից յետոյ փոխարքան հրա-
ւիրեց Միրվանին և Զիւմային՝ որ նոքա
հետևեն իրան:

Նա տարաւ նոցա դէպի պատշգամի, որ
արքայական պալատի գահը նայում էր

դէպի աղմկալի փողոցը: Սպանացոց և Հնդիկ-ների բազմութիւնը գեռ երեռում էր պա-լատի առջև: Փոխարքան՝ նշան տալով՝ թէ կամենում է խօսել դիմեց ժողովրդին հե-տեւալ խօսքերով.

— Ներկայացնում եմ ձեզ սիրելիք, Միր-վանին և Զիւմային, որոնց անձնազոհու-թիւնն ու ազնւութիւնն արժանի են խորին յարգանաց: Նոքա իւրեանց հայրենիքի հա-ւատարիմ քաղացիք են, որովհետեւ զիտեն սուրբ պահէլ մեծ գաղտնիքներ: Նոքա պատ-րաստ էին զոհել իւրեանց երջանկութիւնն ու կեանքն իւրեանց անուան և պատուի հա-մար: Սիրելիք, կոմսուհու անսահման մե-ծահոգութիւնն ու ձեր երկու հայրենակից-ների բարձր առաքինութիւնը ստիպեցին մեզ փոխարքարձ թշնամի լինելուց յետոյ՝ բարեկամներ դառնալ: Դուք, ընդհանուր համաձայնութեամբ՝ մոռանալով ձեր ատե-լութիւնը, վճռել էք յայտնել մեզ ձեր բա-րեբաստիկ գաղտնիքը: Այս վարմունքով դուք մեծ ծառայութիւն արիք ամբողջ աշխարհին: Մենք մեր կողմից պարտական էինք խորին կերպով գնահատել ձեր ազնիւ-

դործը՝ ձեր բոլորից երջանկութեան միջոց-ները գանելու համար: Հանգիսաւոր կեր-պով և բացարձակ յայտնում եմ ձեզ՝ յար-գելիք քաղաքայիք, որ ի յիշատակ այսպիսի անմոռաց անցքին, ևս աղատում եմ ձեզ ստրկութիւնից: Ձեր ազնիւ դործքերը հա-ւասարումեն ձեզ ձեր նուածողների հետ: Այսուհետեւ մենք լիովին ազատ ենք հա-մարում ձեզ: Սիրելիք ձեր թագաւորին և լիովին հաւատարիմ եղէք նորան: Հաւատա-ցած եղէք, որ նա կ գնահատէ ձեր հաւա-տարմութեան զգացմունքները:

Այս խօսքը առաջացրեց բուռն ծափահա-րութիւն և ընդհանուր հիացմունք: Փո-խարքան՝ ցանկալով յաւերժացնել այս օրն երջանիկ Զիւմայի կատարեալ յաղթանա-կով, — պատրաստել տուեց մի ճոխ պատ-դարակ, որի մէջ նատեցրին շքեղ զար-դարուած չնդկուհուն: Բոլոր Սպանացի շքաղիր օրիորդներն ու փոխարքայութիւն- պատուաւոր պահապաններն ուղեկցում էին այս յուղարկաւորութեանը քաղաքի բոլոր փողոցներում: Նոցա առջև գնում էր

մունեաիկը՝ ձի նստած և բարձրաձայն ասում էր.

— Աշա Զիւման, Միրվանի ամուսինը
և փոխարքայուշու վկիչը:

Զիւման՝ թեք ընկած ոսկեկար թաւ-
շեայ բարձերի վերայ, բռնած ունէր քինայի
ծառից մի ճիւղ; Ժողովրդի բազմութիւնն
ուրախ աղաղակներով ուղեկցում էր այս
յուղարկաւորութեանն և օրհնում առա-
քինի Հնդիկուշուն: Պալատ վերագառնալուց
յետոյ՝ Զիւմային տարան շքեղ կահաւո-
լուած սենեակները, որ նշանակած էին նորա,
Միրվանի և իւրեանց որդու համար: Այս
ժամանակից նոքա կոմսի և կոմուշու ա-
մենամերձաւոր ու անկեղծ բարեկամները
դարձան: Երեկոյեան ամբողջ քաղաքը շքեղ
կերպով լուսաւորուած էր, իսկ պալատի
առջև ծածկուած էին ճոխ ընթրիքի ըն-
դարձակ սեղաններ Հնդիկների համար:

Մինչ այն՝ քինայի փոշիները մեծ ազդե-
ցութիւն գործեցին փոխարքայուշու առող-
ջութեան վերայ: Օր աւուր տեսդի զայ-
րոյցքը թուլանում էր սակաւ առ սակաւ

և մէկ շաբաթուայ միջոցում նա բոլորովին
առողջացաւ:

Այն տեղում՝ ուր գտնվում էր չարա-
գուշակ խարցիկը, փոխարքան՝ ի յիշատակ
այս երկելի անցքին, հրամայեց մի գեղեցիկ
արձան գնել սպիտակ մարմարինից: Մէկ
երեսի վերայ ոսկի խոշոր տառերով փորա-
գրուած էին հետեւեալ խօսքերը. «Զիւմա-
յին՝ փոխարքայուշու կեանքի վրկութեան
համար և այն ծառայութեան, որ նա մա-
տուցել է ամբողջ աշխարհին»: Այս արձանի
երկու կողմից երեւում էին քինայի երկու
շքեղ ծառ: Այս ժամանակից Հնդիկները
յատկապէս պաշտում են այս ծառն և
համարում են նորան իբրև Նախախնամու-
թեան մի սուրբ պարգև: Փոխարքան ան-
յապաղ ուղարկեց Եւրոպա քինայի բաւա-
կանաչափ փոշի՝ մանրամասն նկարագրելով,
թէ ինչպէս պէտք է գործածել նորան ջեր-
մի դէմ:

Քինայի փոշին շատ տարիներ կոչվում էր
«կոմսուշու փոշի»: Այն պատիւն ու բազգը՝
որ վայելում էր Զիւման, ամենեին չփո-

Խեցին նորա մեծահոգութիւնը: Նա պահ-
պանեց խորին յարդանք դէպի փոխարքա-
յուշին մինչև իւլ կեանքի վելջն և լիո-
վին արժանի էր այն երջանկութեան, որով
այնպէս առատ վարձատրուած էր նա-
խախնամութիւնից:




iii

103

2001

0024057
2013
6434

ՀՀ Ազգային գրադարան



NL0024057

